<< Արմավիրի մարզպետ՝
պարոն է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ<<Այգեշատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ>> և <<Դողսի միջնակարգ դպրոցի ՊՈԱԿ>> միացյալ կոլեգիալ կառավարման խորհուրդ պետական ոչ առևտրային կազմակերպությունը տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022 թվականի հոկտեմբերի 12–ին ժամը 15 ^{00}–ին:

Կից ներկայացվում են՝ քաղվածք կառավարման խորհուրդի համապատասխան նիստի N15 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ :

Խորհուրդի նախագահ՝ Մ. Մկրտչյան

19.08.2022 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 11-13611-2022
22 08 2022

«Այգեշատի միջնակարգ դպրոց» և «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022թ. օգոստոսի19-ի նիստի № 15 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ օգոստոսի 19 -ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 10 /տաս/ անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. « Այգեշատ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին

/զեկ.խորհրդի նախագահ՝ Մ. Մկրտչյան/

ԼՍԵՑԻՆ՝

Մ. Մկրտչյան ներկայացրեց, որ «Այգեշատ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործող տնօրեն Նաիրա Հովսեփյանը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից:

Համաձայն ՀՀ Կառավարության 2010թ. մարտի 04-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի երկրորդ կետի՝ այն է՝ Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), տվյալ հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 66 աշխատանքային օր առաջ (չներառելով ամառային արձակուրդի ժամանակահատվածը), ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև դպրոցական արձակուրդի ժամկետները՝

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարել մրցույթ:
2. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Մրցույթն անցկացնել հայտերի ընդունման վերջին օրվանից հետո 10-րդ աշխատանքային օրը ժամը 15:00:
4. Խորհրդի որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:
5. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների հայտերն ընդունել «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում և սույն գործընթացը վերապահել խորհրդի անդամ Սալբի Թարոյանին :

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մանյա Մկրտչյան

ՀՀ Արմավիրի մարզի , Այգեշատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1.ՀՀքաղաքացիությունը,
2. Հանրակրթության մասին օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2.ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքումներ կայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5.ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. սեպտեմբերի 7-ից մինչև 2022 թ. սեպտեմբերի **28**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից Այգեշատի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. հոկտեմբերի 12-ին՝ժամը 15:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի միջնակարգ դպրոցում, հասցեն՝գյուղ Այգեշատ Մայիսյան15:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-78-72-73, **էլ.հասցե՝** aygeshatvagarshapat@mail.ru: